Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

<< ՀՀ Գեղարքունիքի մարզի Կարճաղբյուրի Ա. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ –ը հայտարարում է <<Հայոց լեզու>> / 6 դասաժամ/, << Կենսաբանություն>> / 6դասաժամ/, <<Ռուսաց լեզու>> / 8 դասաժամ/, << Կերպարվեստ>> / 7 դասաժամ/, <<Ֆիզկուլտուրա>> /4 դասաժամ/ ուսումնական առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար մրցույթ:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակված հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում է առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել.

Դիմում / Ձև1/, մեկ լուսանկար՝ 3X4 չափի
Անձնագիր.
Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ / դիպլոմ /
Աշխատանքային գրքույկի պատճեն . / առկայության դեպքում/
<< Հանրակրթության մասին >> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան ՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը ՝ առկայության դեպքում
Ինքնակենսագրություն / Ձև 5/.
Այլ պետությունների քաղաքացիները ՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ
Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր / դրանց առկայության դեպքում/
Որակավորման տարրակարգ / առկայության դեպքում/:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկը ամբողջական չէ կամ առկա են թերություններ , մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերցնել և համալրել դրանք:
Փաստաթղթերը ընդունվում են 2024թ. սեպտեմբերի 25-ից հոկտեմբերի 8-ը ներառյալ, ամեն աշխատանքային օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:
Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 14-ին ՝ժամը 13:00-ին, <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Ա.Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի շենքում:

Հասցեն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Կարճաղբյուր, 5փողոց , թիվ 18 :

Տեղեկությունների համար զանգահարել ՝ 077-63-33-07 հեռախոսահամարով: